


Եթէ բարեպաշտութիւնդ զուր կը թուի քեզի, կարդա՛ Եփեսացիներուն 5.1-20

Սատուծոյ նմանեցէ՛ք, որպէս իր սիրելի որդիները, եւ սիրով շարժեցէ՛ք այնպէս, ինչպէս Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Աստուծոյ ընծայեց, որպէս անուշահոտ ընծայ եւ գոհ: Պոռնկութեան, որեւէ պղծութեան կամ ագահութեան խօսքն իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէս կը վայելէ Աստուծոյ ժողովուրդին: Վայել չէ, որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով կամ խեղկատակութեամբ զբաղի՛ք, այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պետք է ըլլայ: Մէկ բան վստահ գիտցէ՛ք, թէ ոեւէ մէկը, որ պոռնկութիւն կ'ընէ, պղծասէր է կամ ագահ, ինչ որ կոտորածութիւն է, ժառանգութիւն պիտի չունենայ Քրիստոսի եւ Աստուծոյ արքայութեան մէջ: Հետեւաբար, չըլլայ որ ոեւէ մէկը պարապ խօսքերով ձեզ խաբէ, որովհետեւ այս բաներուն համար Աստուած իր բարկութիւնը պիտի թափէ անհնազանդ մարդոց վրայ: Ասկէ ետք, որեւէ յարաբերութիւն մի՛ ունենաք այնպիսիներուն հետ, որովհետեւ թէեւ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ Տիրոջ միացաք՝ լոյս էք: Հետեւաբար, լոյսի որդիներուն վայել ձեռով ապրեցէ՛ք, որովհետեւ լոյսին պտուղներն են՝ բարութիւնը, արդարութիւնը եւ ուղիղ ստույգները: Ձանացէ՛ք հասկնալ, թէ Աստուած ի՛նչ կ'ուզէ ձեզմէ, ¹¹եւ բնաւ մասնակից մի՛ ըլլաք խաւարին գործերուն, որոնք Աստուծոյ կամեցած պտուղները չեն տար:

Սիրելի ընթերցող, շարունակէ սոյն գրութիւնը, ունենալով Նոր Կտակարանի Եփեսացիներու գիրքը:

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳ




ՊԼՏՐԱՎԻ ԽՈՐՀՈՐԴԻՆ ՀՎՏԱՏՈՒՄԸ
2.- Պատրաստութիւն ընծաներուն
Բ.- ՃԱՇՈՒ ՊԱՇՏՕՆ

Երբ հաւատացեալները խոտովանած են իրենց ուղղափառ դաւանութիւնը, պատարագիչ քահանան հետեւեալ բառերով կու գայ կնքումն ու պսակումը կատարելու անոնց պայծառ ու ջինջ հաւատքին.-

«Որպէսզի արժանի լոյսանք գոհութեամբ փառաւորելու Քեզ, Հօր եւ Սուրբ Հոգիին հետ միասին. այժմ եւ միշտ եւ յաիտեանս յաիտեանից. ամէն»:

Հասած է ժամը Աստուածորդոյն փառաւորման: Արդ, անոնք որոնք պատրաստ չեն հաղորդակից դառնալու աստուածային այս Խորհուրդին, պարտին դուրս ելլել եկեղեցիէն, որովհետեւ «Այրող կրակ է ան, որ կ'այրէ եւ կը սպառէ մեղաւորները», Ինչպէս պիտի ըսէր եկեղեցոյ մեծ դէմքերէն Բարսեղ Կեսարացի Հայրապետ: ...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍՔԻ ԽՄ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 12 ՄԱՅԻՍ 2024

ԹԻՒ 19

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 23. 12-35: Ա. Յհ. 5. 13-21: Յհ. 12. 12-23:

ԵՐԿՐՈՐԴ ՇԱՂԱՍԱՐԳ

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՈՒ 12: 12-23

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ Չատիկի տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմաւենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «Ովսաննա՛, օրհնեալ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էլ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. «Մի՛ վախճար, ո՛վ Երուսաղէմ, Միոնի՛ աղջիկ, որովհետեւ թագաւորդ քեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ այն ատեն յիշեցին, թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր, որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին, թէ Յիսուս Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ գայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին, թէ ինչպէս ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնէ՞ք, որ բան մըն ալ չենք կրնար ընել: Ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»:

Փիլիպպոս եկաւ Անդրեասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՐԿՐՈՐԳ ԾԱՂԿԱԶԱՐԳ

Երկրորդ Ծաղկագարդի տօնախմբաբուժիկներ սահմաններ է ներսէս Շնորհալիի եղբայրը՝ Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը, հիմնուելով Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապ գտնուած ժամանակ պատահած մէկ աւանդական դէպքին վրայ:

Գրիգոր Լուսաւորիչ երբ Խոր Վիրապ կը գտնուէր, անոր կը սպասարկէր հրեշտակ մը: Համբարձման չորրորդ օրը, Վիրակի օր հրեշտակը չ'երեւար: Միւս օրը Լուսաւորիչ կը հարցնէ պատճառը եւ կը տեղեկանայ, որ այդ օրը երկնային քահանայապետութիւնը կը տօնէր Յիսուսի երկինք համբառնալը եւ նոյն օրը չորրորդ դասակարգութեան տօնն էր, որուն ինք կը պատկանէր:

ԱՐՕԹԸ

Ո՛ր հմ ՏԵՐԱ ԵՒ ԱՍՏՈՒԱՍՍ, ՊԻՏԻ ՓԱՁԱՒՈՐԵԱ ՔԵԶ, ՊԻՏԻ ՕՐՀՆԵՐԳԵԱ ՔՈՒ ԱՆՈՒՆ, ՈՐՈՎԵՏԵՒ ԱՔԱՆՉԵՒԻ ԵՍ ԳՈՐՏԵՐԸ, ՈՐՈՒՔ ԿԸ ԿԱՏԱՐԵԱ ՍԿԶԲԵՆ ԻՍԿ ՊԱՏՐԱՍԱՍԾ ՔՈՒ ՃՇԱՐԻՏ ՕՐԱԳԻՐՈՂ ՀԱՍԱԶԱՅԱ:

Այո՛, ՏԵՐ, քարքսերը շորսկոյտի վերաճե՛՛՛ր, շիւսայնսկս կործանե՛՛՛ր բերդաքարքսերը, ԵՒ Ա՛՛՛՛ ՔԱՒ ՊԻՏԻ վերաճիւնին անշահստերո՛՛ւ քարքսը:

Ազա թէ հնձո՛՛ր՝ հմ հեղձ ժողովորդս ՊԻՏԻ ՕՐՀՆԵ ՔԵԶ, ԱՆԻՐԱՒՈՒՍԾ ժողովորդները ՊԻՏԻ ՕՐՀՆԵՆ ՔԵԶ, ՈՐՈՎԵՏԵՒ ԽՈՒՆՐՀ ժողովորդներին ՕԳԱԿԱՆ ԵՐԱՐ, ԱՊԱԽԵՆ ԵՐԱՐ ԿԱՐԻՔՈՒԹԵԱՆ յԵՑ ԵՐՈՂ ԸՆԿՃՈՒՍՏԵՐՈՒՄ ԵՒ ՓՐԿԵՇԻՐ ԶԱՆՈՒՔ ԶԱՐԱԳՈՐԾԵՐՈՒ ԶԵՄԲԵԱ: ԱՊԱԽԵՆ ԵՐԱՐ ՏԱՐԱԿՍԵՐՈՒՄ, ՈԳԻ ԵՐԱՐ ՍԻՈՒՍ ԵՍԵ ԲԱԿՈՂ ԱՆԻՐԱՒՈՒՍՏԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ԶՈՒՐԸ՝ ՏԱՁԱԽԵՆ ԱՈՒԱՐԱՍ ՍԱՐՊՈՒՄ: Ե.Մ.

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՍԵՆԵՑՈՒՆ»Ը, ՈՐ ՔԱՀԱՆԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔԻՆ ՅԱՃԱՍԿ ԿԸ ԿՐԿՆԷ

Հետեւեալ իմաստը ունի. նախ՝ Քրիստոս իր ծնունդով երկինքի եւ երկրի միջեւ խաղաղութիւնն հաստատեց, ինչպէս հրեշտակները երգեցին: Ապա՝ մկրտութենէն ետք աշխարհին արքայութեան Աւետարանը սկսաւ քարոզել եւ Աստուծոյ հետ հաշտութեան ճանապարհը սկսաւ ուսուցանել: Ի վերջոյ, մատնութեան երեկոյին, առաքեալներուն աւանդեց ըսելով. «Խաղաղութիւն կը թողում ձեզի: Իմ խաղաղութիւնս է որ կու տամ ձեզի» (ՅՎ. 14:27), եւ քահանան Քրիստոսէն առնելով խաղաղութիւնը, ժողովուրդին կու տայ:

Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՌԱՄԵՐՈՐԵԱՅ ԸՆԾԱՅՈՒՄԸ

Ի հետեւումն Հին Կտակարանի, մանուկը ծնելէն ետք, մայրը զինք 40-րդ օրը տաճար կը տանի ծննդեան անմաքրութենէն սրբուելու եւ մանուկը Աստուծոյ ընծայելու համար (տե՛ս Ղեւտ. 12:6-8): Այս օրէնքին սահմանադիրը Աստուած ինքն է՝ Հին Ուրարի Եկեղեցիին մէջ, որ Քրիստոսի վրայ ալ կատարուեցաւ: Այդ պատճառաւ, նոր Ուրարի Եկեղեցին ալ տնօրինեց այդ մէկը կատարել, ո՛չ միայն անդրանիկներու պարագային, այլ՝ բոլոր նորածիններուն:

Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

Ո՛վ Է Ճշմարիտ Մայրը

Ճշմարիտ մայրը ան է, որ ո՛չ միայն զաւակ կը բերէ լոյս աշխարհի, այլեւ՝ զայն կը բերէ աշխարհի լոյսին՝ Քրիստոսի:

Ճշմարիտ մայրը ան է, որ ո՛չ միայն մարմնաւոր ծնունդ կու տայ իր զակին, այլեւ՝ զայն կ'առաջնորդէ Սուրբ Հոգիին միջոցաւ իր վերածնունդը ապրելու:

Ինչպէս իսկական ծնունդը հոգեւոր ծնունդն է եւ ո՛չ թէ մարմնաւոր ծնունդը, նոյնպէս ալ, իսկական մայրը իր զակին մարմնաւոր ծնունդ տուողը չէ, այլ՝ զայն հոգեւոր ծնունդի առաջնորդողը: Ճշմարիտ մայրը իր զաւակը հրեշտակներուն երգակից ըլլալու եւ Աստուծոյ Գառնուկին համար երգելու պատիւին պատրաստող մայրն է:

ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒՆՉԸ

Երբ Աւետարան կը կարդաս, հաճոյք ու հրճուանք մի փնտտեր, ոչ ալ փայլուն միտքեր, այլ՝ աշխատէ տեսնել անմեղունակօրէն սուրբ ճշմարտութիւնը: Մի՛ բարարարուիր Աւետարանի անպրտուղ ընթերցանութեամբ, այլ՝ ջանաբ կատարել անոր պատուիրանները: Աւետարանը կարդա՛ գործերով: Անիկա կեանքի գիրքն է, եւ պէտք է կեանքով կարդալ զայն:

Իզնատի Բրեանչանիտով

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵԱ...

ԵԹԷ Կ՛ՈՒԶԵԱ ԳԻՏՆԱԿ ՏԻՐՈՋ ԽՕՍՔԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ, ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 19

Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ, երկնակամարը անոր արարչութեան կը վկայէ: Իւրաքանչիւր օր նոյն վկայութիւնը կուտայ, ամէն մէկ գիշեր նոյն գիտութիւնը կը յայտնէ: Չկայ որեւէ խօսք, չկայ որեւէ բառ եւ որեւէ ձայն չի լսուիր անոնցմէ, բայց ամբողջ աշխարհ կը սփռուի անոնց պատգամը, մինչեւ աշխարհի ծայրը կը հասնի անոնց վկայութիւնը: Աստուած երկինքի մէջ բնակարան կանգնեց արեգակին, եւ սա՛ փեսայի մը պէս իր առագաստէն դուրս կուգայ, հսկայի մը պէս ցնծութեամբ իր նամբան կ'երթայ: Երկինքի մէկ ծայրէն կը ծագի ու մինչեւ միւս ծայրը կը շրջի եւ չկա՛յ բան մը, որ անոր տապէն գերծ մնայ:

ՏԻՐՈՋ ՕՐԷՆՔԸ

ՏԻՐՈՋ օրէնքը կատարեալ է, անձր կը վերանորոգէ:

ՏԻՐՈՋ պատուիրանները վստահելի են, իմաստուն կը դարձնեն պարզամիտները:

ՏԻՐՈՋ հրահանգները ուղիղ են, սիրտը կ'ուրախացնեն.

ՏԻՐՈՋ պատուիրանները լոյս են, աչքերը կը լուսաւորեն:

ՏԻՐՈՋ վախը սուրբ է, եւ յաւէտ անջնջելի:

ՏԻՐՈՋ դատաստանները ճշմարիտ են եւ միշտ արդար, աւելի ցանկալի՝ քան ամենէն գուտ ոսկին, աւելի քաղցր՝ քան մեղրախորիսիւնէն քամուած մեղրը: